600.0319.09.08.22

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 օգոստոսի 2022 թվականի №319-Ն
ք.Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի №80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի պահպանման ծախսերի մաս կազմող ֆոնդերի չափերը (մեծությունը) սահմանելու մասին» №80-Ն որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ [illegible]ԱՄՅԱՆ

ք.Երևան
9 օգոստոսի 2022թ.

Հավելված
Սահմանված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի փետրվարի 28-ի № 80-Լ որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՖՈՆԴԵՐԻ ՉԱՓԵՐԸ (ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ)

| հ/հ | Պահպանման ծախսերի դասակարգման տարրերի | | Գումարը /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| | տնտեսագիտական ծածկագիրը | անվանումը | |
| 1 | 411200 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 154640.7 |
| 2 | 411300 | Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում | 35325.9 |
| 3 | 421200 | Էներգետիկ ծառայություն | 13354.0 |
| 4 | 421300 | Կոմունալ ծառայություն | 260.0 |
| 5 | 421400 | Կապի ծառայություն | 3447.6 |
| 6 | 421500 | Ապահովագրական ծախսեր | 407.0 |
| 7 | | Գործուղումներ և շրջագայության ծախսեր, այդ թվում՝ | |
| 1) | 422100 | Ներքին գործուղումներ | 4000.0 |
| 2) | 422200 | Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 29753.4 |
| 8 | 423200 | Համակարգչային ծառայություններ | 3729.0 |
| 9 | 423500 | Կառավարչական ծառայություններ | 71160.0 |
| 10 | 423700 | Ներկայացուցչական ծախսեր | 500.0 |
| 11 | 423900 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 524.0 |
| 12 | 425100 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 800.0 |
| 13 | 425200 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 5145.0 |
| 14 | 426100 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 2662.6 |
| 15 | 426400 | Տրանսպորտային նյութեր | 10510.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | 426700 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 2116.2 |
| 17 | 451100 | Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին | 60.0 |
| 18 | 462100 | Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին | 2872.7 |
| 19 | 463900 | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 9391.5 |
| 20 | 472900 | Այլ նպաստներ բյուջեից | 104500.0 |
| 21 | 482300 | Պարտադիր վճարներ | 700.0 |
| 22 | 512100 | Տրանսպորտային սարքավորումներ | 10000.0 |
| 23 | 512200 | Վարչական սարքավորումներ | 5633.0 |
| 24 | | **Ընդամենը** | **471492.6** |

1. Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվում է համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի, ինչը 2023 թվականին կազմում է 536656.8 հազար դրամ: